Հավելված 4
«ՀՀ ՏԶՆՆ-ԷԱՃՊՁԲ-19/11» ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ՏԶՆՆ-ԷԱՃՊՁԲ-19/11-1-19

ք.Երևան 11/ 01 /2019թ.

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-ը ի դեմս Արմեն Կարապետյան-ի, որը գործում է ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Լալայան-ի, որը գործում է Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 900000.00 (ինը հարյուր հազար ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և

ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի

միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

---

[1]Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:
[2]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Ֆլեշ Մոտորս ՍՊԸ |
| Հասցե՝ Միեր Մկրտչյան 5 | Հասցե՝ Ռուբինյանց փ. 31 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ |
| 900013010013 | 1510012745550100 |
| 02505983 | 00873228 |
| Արմեն Կարապետյան | Ա. Լալայան |
| ____________ /ստորագրություն/ | ____________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |
| Digitally signed by KARAPETYAN ARMEN 2809590125 Date: 2019.01.10 11:06:02 AMT | Digitally signed by MELIKSETYAN SMBAT 1101902066 Date: 2019.01.09 11:50:10 GMT+04:00 |

Հավելված N 1
11 / 01 /2019թ. կնքված
ՀՀ ՏԶՆՆ-ԷԱՃ ՁԲ-19/11-1-19 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 2 | 34351200/509 | 2.ավտոմեքենաների անիվներ | Անիվներ մարդատար ավտոմեքենաների համար՝ 205/55 R16, ձմեռային, Տոյոտա Կորոլլա մարդատար ավտոմեքեն | հատ | 20500.00 | 410000.00 | 20 | ք.Երևան,Մ. Մկրտչյան 5 | 20 | Մատակարարումը իրականաց-վելու է համապատաս-խան ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև հ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անների համար: Գործող ստանդարտը՝ ՀՍՏ-183-99: Անվադողերի փոխարինումը և հավասարակշռումը Երևան քաղաքում՝ մատակարարի կողմից: Կցված է 77d087b3.pdf | | | | | | | ամապատաս-խան համաձայնագրի կնքման հիման վրա՝ պահպանելով 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը- մասը | |
| 3 | 34351200/510 | 3.ավտոմեքենաների անիվներ | Անիվներ մարդատար ավտոմեքենաների համար՝ 185/70 R14, ձմեռային, Ռենո Լոգան մարդատար ավտոմեքենաների | հատ | 17000.00 | 136000.00 | 8 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** | |
| | | | | | | | | ք.Երևան.Մ.Մկրտչյան 5 | 8 | Մատակարա-րումը իրականաց-վելու է համապատաս-խան ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև h | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | աների<br>համար։<br>Գործող ստ<br>անդարտը՝<br>ՀՍՏ-183-99<br>: Անվադողե<br>րի փոխարի<br>նումը և հա<br>վասարակշ<br>ռումը<br>Երևան<br>քաղաքում՝<br>մատակար<br>արի<br>կողմից։<br>Կցված է<br>9a817d01.p<br>df | | | | | | | ամապատաս-<br>խան համաձայ<br>նագրի կնքման<br>հիման վրա՝<br>պահպանելով<br>526-Ն<br>որոշմամբ<br>հաստատված<br>կարգի 21-րդ<br>կետի 1-ին<br>ենթակետի ը<br>մասը |
| 4 | 34351200/5<br>11 | 4.ավտոմեք<br>ենաների<br>անիվներ | Անիվներ<br>մարդատար<br>ավտոմեքեն<br>աների<br>համար՝<br>195/65 R15,<br>ձմեռային,<br>Հունդայի<br>Սոնատա<br>մարդատար<br>ավտոմեքեն | հատ | 21000.00 | 84000.00 | 4 | հասցեն | ենթակա<br>քանակը | Ժամկետը** |
| | | | | | | | | ք.Երևան.Մ.<br>Մկրտչյան 5 | 4 | Մատակարա-<br>րումը իրական<br>աց-վելու է համ<br>ապատաս-խան<br>ֆինանսական<br>միջոցների<br>առկայության<br>դեպքում և<br>կողմերի միջև կ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անների<br>համար.<br>«Կամա» ա<br>պրանքանի<br>չի կամ համ<br>արժեքը.<br>գործող ստ<br>անդարտը՝<br>ՀՍՏ-183-99<br>: Անիվների<br>փոխարինո<br>ւմը և հավա<br>սարակշռու<br>մը Երևան<br>քաղաքում՝<br>մատակար<br>արի<br>կողմից:<br>Կցված է<br>dc624137.p<br>df | | | | | | | ամապատաս-<br>խան համաձայ<br>նագրի կնքման<br>հիման վրա՝<br>պահպանելով<br>526-Ն<br>որոշմամբ<br>հաստատված<br>կարգի 21-րդ<br>կետի 1-ին<br>ենթակետի ը-<br>մասը | |
| 5 | 31442100/504 | 5.կուտակիչ մարտկոցներ | Գնման առարկա է հանդիսանու մ ծառայող ական ավտ ոմեքենայի ծմեռային ա նվադողերի | հատ | 27000.00 | 270000.00 | 10 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** | |
| | | | | | | | | ք.Երևան.Ս. Մկրտչյան 5 | 10 | Մատակարա-րումը իրական աց-վելու է համ ապատաս-խան ֆինանսական միջոցների | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ծեոց<br>բերումը. Կ<br>ապարաթե<br>վային ստա<br>րտերային Կ<br>ուտակչայի<br>ն մարտկոց<br>նախատեսվ<br>ած թեթև<br>մարդատար<br>ավտոմեքեն<br>այի համար.<br>մարտկոցի<br>տարողությ<br>ունը՝ 77Ա.<br>մատակար<br>արումը և տ<br>եղադրումը՝<br>մատակար<br>արի<br>կողմից:<br>Կցված է<br>de724d40.p<br>df | | | | | | | առկայության<br>դեպքում և<br>կողմերի միջև հ<br>ամապատաս-<br>խան համաձայ<br>նագրի կնքման<br>հիման վրա՝<br>պահպանելով<br>526-Ն<br>որոշմամբ<br>հաստատված<br>կարգի 21-րդ<br>կետի 1-ին<br>ենթակետի ը-<br>մասը |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** Այս սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Միեր Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900013010013
02505983
Արմեն Կարապետյան

___________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by
KARAPETYAN ARMEN
2809590125
Date: 2019.01.10 11:09:26
AMT

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
Հասցե՝ Ռուբինյանց փ. 31
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
15100 2745550100
0 873228
Ա. Լալայան

___________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by
MELIKSE YAN SMBAT
1101902 66
Date: 20 9.01.09 11:50:38
GMT+04:00

Հավելված N 2
11/01/2019թ. կնքված
ՀՀ ՏԶՆՆ-ԷԱՃԱՊՁԲ-19/11-1-19 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մյս. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 2 | 34351200/509 | 2.ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | 410000.00 |
| 3 | 34351200/510 | 3.ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | 136000.00 |
| 4 | 34351200/511 | 4.ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | 84000.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 31442100/504 | 5.կուտակիչ մարտկոցներ | | | | | | | | | | | | | 270000.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Միեր Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900013010013
02505983
Արմեն Կարապետյան

____________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by KARAPETYAN ARMEN 2809590125
Date: 2019.01.10 11:10:43 AMT

ՎԱՃԱՌՈՂ
Ֆլեշ Մոտորս ՍՊԸ
Հասցե՝ Ռուբինյանց փ. 31
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
1510012745550100
00873228
Ա. Լալայան

____________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MELIKSETYAN SMBAT 1101902066
Date: 2019.01.09 11:50:53 GMT+04:00

Հավելված N 3
11/ 01 /2019թ. կնքված
ՀՀ ՏՁՆՆ-ԷԱԱՊՁԲ-19/11-ծածկագրով պայմանագրի
-1-19

| Պայմանագրի կողմ | | Պատվիրատու | |
|---|---|---|---|
| ________________ | | ________________ | |
| ________________ | | ________________ | |
| գտնվելու վայրը | ________ | գտնվելու վայրը | ________ |
| hh | ________ | hh | ________ |
| hվhh | ________ | hվhh | ________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 2 | 2.ավտոմեքենաների անիվներ | Անիվներ մարդատար ավտոմե | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քեևաների համար` 205/55 R16, ձմեռային, Տոյոտա Կորոլլա մ արդատա ր ավտոմե քեևաների համար: Գործող ս տանդար տը` ՀՍՏ-1 83-99: Ան վադողերի փոխարինումը և հա վասարակ շռումը Երևան ք աղաքում` մատակա րարի կող մից:(Կցվա ծ է 77d087b3.pdf) | | | | | | |
| 3 | 3.ավտոմե քենաների անիվներ | Անիվներ մ արդատա ր ավտոմե քեևաների համար` 185/70 R14, ձմեռային, Ռենո Լոգան մա րդատար ավտոմեք ենաների համար: Գործող ս | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տանդարտը` ՀՍՏ-183-99: Անվադողերի փոխարինումը և հավասարակշռումը Երևան քաղաքում` մատակարարի կողմից:(Կցված է 9a817dd1.pdf) | | | | | | |
| 4 | 4.ավտոմեքենաների անիվներ | Անիվներ մարդատար ավտոմեքենաների համար` 195/65 R15, ձմեռային, Հունդայի Սոնատա մարդատար ավտոմեքենաների համար, «Կամա> ապրանքանիշի կամ համարժեքը, գործող ստանդարտը` ՀՍՏ-183-99: Անիվների փոխարինումը և հա | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վասարակ շռումը Երևան ք աղաքում՝ մատակա րարի կող մից:(Կցվա ծ է dc624137.pdf) | | | | | | |
| 5 | 5.կուտակ իչ մարտկ ոցներ | Գնման առարկա է հանդիս անում ծա ռայողակ ան ավտո մեքենայի ձմեռային անվադող երի ձեռք բերումը. Կապարա թթվային ս տարտեր ային կուտ ակչային մարտկոց Նախատե սված թեթև մար դատար ա վտոմեքեն այի համար, մ արտկոցի տարողու թյունը՝ 77Ա, մատ ակարարո ւմը և տեղ ադրումը՝ մատակա րարի կող | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մից:(Կցված է de724d40.pdf) | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

_____________________________

**ստորագրություն**

_____________________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

**Ապրանքը ընդունեց**

_____________________________

**ստորագրություն**

_____________________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

Հավելված N 3.1
___/__________/2019թ. կնքված
ՀՀ ՏԶՆՆ-ԷԱԱՊՁԲ-19/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ -ի (այսուհետ` Գնորդ) և ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (այսուհետ` Վաճառող) միջև 20 թ.__________________________ -ին կնքված N______________________________ պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| 2.ավտոմեքենաների անիվներ | հատ | |
| 3.ավտոմեքենաների անիվներ | հատ | |
| 4.ավտոմեքենաների անիվներ | հատ | |
| 5.կուտակիչ մարտկոցներ | հատ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

____________________________
ազգանուն, անուն
____________________________
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ`
____________________________
ազգանուն, անուն
____________________________
ստորագրություն

Հավելված 2
«ՀՀ ՏԶՆՆ-ԷԱԱՊՁԲ-19/11» ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

**ԴԻՄՈՒՄ**
**առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման**

***«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն,*** որպես «ՀՀ ՏԶՆՆ-ԷԱԱՊՁԲ-19/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, կից ներկայացնում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև.

- գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները,*
- համատեղ գործունեության պայմանագրի պատճենը**,
- սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը

:

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ Տնօրեն՝ Ա. Լալայան

* եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.
** եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

*Հավելված 3*
«ՀՀ ՏԶՆ Ն-ԷԱԱՊՁԲ-19/11» **ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՆԿԱՐԱԳԻՐ**
**առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական**

***«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն***, որպես «ՀՀ ՏԶՆՆ-ԷԱԱՊՁԲ-19/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագրերը |
| *2* | 2. ավտոմեքենաների անիվներ | ***Kapsen*** | *Shandong Hongsheng Tyre Co. Ltd* | *Չինաստան* | *Անիվներ մարդատար ավտոմեքենաների համար՝ 205/55 R16, ձմեռային, Տոյոտա Կորոլլա մարդատար ավտոմեքենաների համար: Գործող ստանդարտը՝ ՀՍՏ-183-99: Անվադողերի փոխարինումը և հավասարակշռումը Երևան քաղաքում՝ մատակարարի կողմից:* |
| *3* | 3. ավտոմեքենաների անիվներ | ***Kapsen*** | *Shandong Hongsheng Tyre Co. Ltd* | *Չինաստան* | *Անիվներ մարդատար ավտոմեքենաների համար՝ 185/70 R14, ձմեռային, Ռենո Լոգան մարդատար ավտոմեքենաների համար: Գործող ստանդարտը՝ ՀՍՏ-183-99: Անվադողերի փոխարինումը և հավասարակշռումը Երևան քաղաքում՝ մատակարարի կողմից:* |
| *4* | 4. ավտոմեքենաների անիվներ | ***Triangle*** | *Triangle tyre Co.* | *Չինաստան* | *Անիվներ մարդատար ավտոմեքենաների համար՝ 195/65 R15, ձմեռային, Հունդայի Սոնատա մարդատար ավտոմեքենաների համար, գործող ստանդարտը՝ ՀՍՏ-183-99: Անիվների փոխարինումը և հավասարակշռումը Երևան քաղաքում՝ մատակարարի կողմից:* |
| *5* | 5. կուտակիչ մարտկոցներ | ***RUSH*** | *ООО Рязанский аккумуляторный завод "ТАНГСТОУН"* | *Ռուսաստան* | *Գնման առարկա է հանդիսանում ծառայողական ավտոմեքենայի ձմեռային անվադողերի ձեռք բերումը. Կապարաթթվային սպարտերային կուտակչային մարտկոց նախատեսված թեթև մարդատար ավտոմեքենայի համար, Մարտկոցի տարողությունը՝ 77Ա, մատակարարումը և տեղադրումը՝ մատակարարի կողմից:* |

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ    Տնօրեն՝ Ա. Լալայան

Digitally signed by MELIKSETYAN SMBAT 1101902066
Date: 2018.12.24 13:01:53 GMT+04:00